

The background features a repeating pattern of stylized, light-colored birds in flight. Overlaid on this is a collection of books, some open and some closed, rendered in a simple line-art style. The books are scattered across the page, with some appearing to be flying or falling. The overall color palette is a warm, muted beige or light brown.

**ՀԱՅ ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՆ ԹՈՒՐԲ ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐԻՆ
ԾՐԱԳՐԻ
ԱՄՓՈՓԻՉ ՋԵԿՈՒՅՑ
1 դեկտեմբեր -31 մարտ, 2017**



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հայ Հրատարակիչները Հանդիպում են Թուրք Հրատարակիչներին»։ Սա ԵՄ-ի ծրագիր է, որը համակարգվել է Թուրք Հրատարակիչներին ասոցիացիայի կողմից «Անտարես» Հրատարակչությունից մասնակցությամբ 2016թ. դեկտեմբերից մինչև 2017թ. մարտի 31-ը:

Ծրագիրը որպես հիմք վերցրել էր ԹՀԱ-ի ներկայացուցիչները՝ Երևան նախորդ այցելությունն ու արել հաջորդ քայլը: Հրատարակիչներին այցի ժամանակ նախաձեռնվել էր Հանդիպումների շարք ու քննարկվել երկու երկրների միջև Հրատարակչական հարաբերությունների զարգացման հեռանկարները:

Հիմնական նպատակն էր ծանոթացնել Հայ և Թուրք Հրատարակիչներին, ստեղծել նոր գործնական կապերի հնարավորություն և իրականացնել օգտակար քննարկումներ երկու երկրների միջև գրական դաշտում առկա խոչընդոտների ու դրանց հաղթահարման հնարավորությունների մասին:

Հրատարակչական համագործակցության ու գրական կապերի ամրացումը կողմերից յուրաքանչյուրին կտանեն ղեկի ղեմնկրատական պլյուրալիզմի ու սոցիալական ինտեգրացման:

Այս առումով հայաստանցի ներքոնշյալ Հրատարակիչները այցելեցին Ստամբուլ՝ մասնակցելու եռօրյա մասնագիտական ծրագրին, որը ներառում էր հանդիպումներ և այցելություններ (22-24 փետրվար):

- Արքմենիկ Նիկողոսյան, «Գրքի ինստիտուտ» մշակութային ՀԿ
- Արթուր Մեսրոպյան, «Զանգակ» Հրատարակչություն
- Արմեն Մարտիրոսյան, 1-ին գրական գործակալություն
- Շավարշ Կարապետյան, «Էդիթ Պրինտ» Հրատարակչություն
- Սամվել Գասպարյան, «Արեգ» Հրատարակչություն
- Հուրիսիան Մադոյան, «Անտարես» Հրատարակչություն

2017թ. փետրվարի 22-ին Hilton Istanbul Bosphorus Հյուրանոցում տեղի ունեցած մասնագիտական հանդիպման ժամանակ Հյուրերը Հանդիպեցին ավելի քան 50 մասնակցի հետ: Նրանք ծանոթացան Թուրքական շուկային՝ փաստերով ու թվերով, ինչպես նաև ներկայացրին հայկական շուկան և իրենց կազմակերպությունները: 23-24-ին այցելեցին մի քանի հրատարակչություն, ինչպես նաև հայերեն և թուրքերեն գրականություն վաճառող գրախանութներ: Ծրագրի ավարտին «Հրանտ Դինք» հիմնադրամում քննարկվեցին վերջնական արդյունքները: Անձամբ հանդիպեցին որոշ Թուրք Հրատարակիչներին և ավելի լայն գաղափար կազմեցին ժամանակակից Թուրք հասարակության ու մշակույթի մասին: Ավելին՝ Ստամբուլի Հայ Հրատարակիչների հետ հանդիպումները հնարավորություն ստեղծեցին ընդլայնել տեսակետները Թուրքիայի Հայ համայնքի մշակութային ու ընթերցասիրական կյանքի մասին: Հանդիպումները և այցելությունները ժամանակ պայմանավորվածություններ ձևավորեցին մի քանի դրքի հրատարակման համար:



ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Հայաստանի և Թուրքիայի միջև հեղինակային իրավունքի և մեծածախ վաճառքի շուկայի զարգացնելու համար քննարկվել է երեք հիմնական խնդիր՝ թարգմանիչների սակավությունը, արևելահայերենի և արևմտահայերենի տարբերություններն ու հայաստանյան փոքր շուկան:

- Հայոց լեզուն բաժանված է երկու ճյուղի՝ արևելահայերեն և արևմտահայերեն: Թուրքիայում և ընդհանրապես աշխարհասփյուռ հայերի մեծ մասը խոսում են արևմտահայերեն, իսկ Հայաստանում, Վրաստանում և Իրանում՝ հիմնականում արևելահայերեն: Բառապաշարը գրեթե նույնն է, իսկ քերականությունն ու ուղղագրությունը լրիվ տարբեր են: Մի հայերենից մյուսը փոխադրելու համար պետք են իմացություններ, որ ոչ բոլորն ունեն:

- Երկու հայերենները տարբեր պահանջներ ունեն, որոնք պետք է քննարկվեն առանձին-առանձին.

1. Արևելահայերեն գրականությունը ներկայացնել Թուրքիայի ընթերցողին,
2. Պահպանել արևմտահայերենը, որը UNESCO-ն ներառել է անհետացող լեզուների շարքում¹:

- Թուրքիայում չկան արևմտահայերենի թարգմանական ծրագրեր, քանի որ լեզուն գտնվում է անհետացման եզրին: Սա առաջնային խնդիր է Թուրքիայի և տեղի հայ բնակչության համար: Առկա թարգմանիչները թուշակառու ուսուցիչներ են, ում Թուրքերենը կատարելագործման կարիք ունի, երիտասարդ թարգմանիչներն էլ կարիք ունեն հրատարակչություններում անցնել բավական երկար փորձաշրջան համապատասխան փորձ ձեռք բերելու համար: Թարգմանիչների սակավությունը նաև հանգեցնում է Թուրքիայի հայ համայնքի դպրոցներում որակավորված ուսուցիչների պակասին:



- Թուրքիայի հայերը պետք է կենտրոնանան իրենց մայրենի լեզուն կենդանի պահելու վրա, իրականացնեն թարգմանիչների և խմբագիրների մասնագիտացման դասընթացներ և հրատարակչական ծրագրեր:
- Արևելահայերենից արևմտահայերեն կամ արևմտահայերենից արևելահայերեն խմբագրման, սրբագրման գործընթացում ուղղագրությունը հիմնական խնդիրն է,

1 <http://www.unesco.org/languages-atlas/>



ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ ՍԱԿԱՎՈՒԹՅՈՒՆԸ

- Թուրքերենից Հայերեն, Հայերենից Թուրքերեն թարգմանիչների թիվը սահմանափակ է,
- Երկու լեզվի միջև խմբագրական աշխատանքներ իրականացնող խմբագիրների քանակը սահմանափակ է:
- Արևելահայերենի և արևմտահայերենի միջև տարբերությունները թուրքական և հայկական հրատարակչական շուկաների համար որոշ խնդիրներ են առաջացնում, բայց այս փաստը չպետք է ուժեղացնել, և այն կդադարի խոչընդոտ լինել բավարար քանակով որակավորված խմբագիրների և թարգմանիչների առկայության դեպքում:
- Երեւանի պետական համալսարանն ունի արևելագիտական լեզուների ֆակուլտետ, որտեղ սովորում են արաբերեն, թուրքերեն, պարսկերեն, օսմանագիտություն: Ուսուցումն անցնում է երկու մակարդակով՝ բակալավր (4 տարի) և մագիստրատուրա (2 տարի): Ամեն տարի ֆակուլտետն ավարտում է մոտ 60 հոգի²
- Հայերենից Թուրքերեն սակավաթիվ թարգմանիչներ կան: Քչերն են իրենց ապրուստը թարգմանությունը վաստակում և հետևաբար գերադասում են սինխրոն թարգմանություններ կամ ավելի լավ վարձատրվող գործ:
- Քաղիր Հաս Համալսարանի Lifelong ուսուցողական կենտրոնն իրականացնում է Հայոց լեզվի դասընթացներ անվճար հիմունքներով:

ՓՈՔԻ ՇՈՒԿԱՆԵՐ

- Ընդհանուր անհամաչափությունները Հայաստանի և Թուրքիայի միջև նաև արտացոլվում է հրատարակչական սեկտորի հնարավորությունների և ընթերցողների քանակի վրա: Հայ ժողովրդի հետաքրքրությունը թուրքերի հանդեպ և թուրքերինը նույնչափ չէ: Թուրքիայում կա շատ փոքր, բայց աճող հետաքրքրություն Հայաստանի հանդեպ: Նոր ծրագրեր պետք է զարգացվեն այս հետաքրքրությունը երկուստեք մեծացնելու համար, և հրատարակիչների դերն այս գործում առանցքային է:
- Հայաստանում հրատարակչության և գրականության հիմնական խնդիրը աղքատությունն է: Մարդիկ չունեն բավական միջոցներ գիրք գնելու համար, և հետևաբար, շուկան շատ փոքր է:
- Հայաստանում գրքերի համար չկա գրաքննություն, և պետությունը աջակցում է հրատարակիչներին շուկան ընդլայնելու համար:
- Թուրքերենից Հայերեն թարգմանությունների գները բավական բարձր են

² <http://www.yzu.am/faculties/en/Oriental-Studies>
<http://www.sci.am/resorgs.php?oid=33&dangid=1>



Հայաստանի համար: Թարգմանիչների քչութիւնը կանխում է մրցակցութեան ու ցածր գների հնարավորութիւնը: Հրատարակչական սեկտորի վճարումները քիչ են նրանց համար:

- «Հայ գրականութեան հիմնադրամը» ստեղծվել է Հայ գրականութեան աջակցելու համար: Մի քանի գիրք արդեն հրատարակվել է 8 լեզվով:
- Թուրքիայի հայկական դպրոցներում սովորում են արեմտաՀայերեն, ուստի դասագրքերը պատվիրում են արտասահմանից: Եվ չեն կարողանում օգտագործել Հայաստանից բերված դասագրքերն ու մանկական գրքերը:
- Հայերենից մանկական գրքերի թարգմանումն ու հրատարակումը Թուրքիայում Հայ համայնքի համար կարևորագույն դրույթ է, որը կիրառելի Հայաստանի ժամանակակից մշակույթի, ավանդույթների ու կյանքի մասին:

Ա.ՅԼ

- Երկու երկրների միջև փոստային փոխադրումների փորձը քիչ է: Միշտ խնդիրներ են առաջացել: Այս հարցը չպետք է անտեսել, որ հետագայում հնարավոր դառնա մեծածախ առևտուրը:
- Սահմանների բացումը կբարելավի հարաբերութիւնները և մեծ ազդեցութիւն կունենա երկու կողմերի վրա: Սա իրականացնելու համար առաջին հերթին պետք է երկու համայնքների միջև ստեղծել մշակութային տեղեկատվական դաշտ և ամրապնդել կապերը:





ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐ

Այս նախաձեռնումից հիմնական նպատակներն էին պարզաբանել թուրք ու Հայ մասնակիցների հետաքրքրություններն ու առաջնային նպատակները:

Այս պարզաբանումները ԹՀԱ-ին և այլ հետաքրքրված մարմիններին կօգնեն ողջամիտ ծրագրեր կազմել և հստակ քայլերի դիմել հրատարակիչների միջև հարաբերությունների հետագա զարգացման համար:

Թարգմանությունների աջակցումն ու արևմտահայերենի պահպանումը:

- Թուրքերենից Հայերեն թարգմանությունները կարելի է իրականացնել միջնորդ լեզուներից և սա կղառնա հարաբերությունների ակտիվացման ժամանակավոր լուծում:
- Երկու երկրների միջև հրատարակչական գործունեությունն արագացնելու առաջին քայլերից մեկը պետք է լինի Հայերենից թուրքերեն թարգմանիչների ու հրատարակությունների քանակի աճը:
- Նոր թարգմանիչներ պետք է կրթվեն և մասնագիտանան:
- Թարգմանչական արհեստանոցներ պետք է կազմակերպվեն Հայաստանում և Թուրքիայում մի քանի արդեն ակտիվ թարգմանիչներին սատարելու, մոտիվացնելու և նորերին սովորեցնելու համար: Կարճ ժամանակում այն ոչ մի արդյունք չի տա, բայց հետագայում նոր թարգմանիչներ կաճեցնի:
- Հայաստանում թուրքագիտություն ֆակուլտետն ավարտած ուսանողները պետք է մոտիվացվեն թարգմանչությունը զբաղվելու համար: Նրանք կարող են դալ Թուրքիա տեղի հրատարակչություններում փորձ ձեռք բերելու համար:
- Թարգմանչական արհեստանոցներ կարող են կազմակերպվել նաև Հայաստանում: ԹՀԱ-ն կարող է հայտարարություն ուղարկել շահագրգիռ հրատարակիչներին՝ մասնակցելու համար: Դիմողները կարող են հայկական բուհերում սովորել: Կրթության և գիտության և Սփյուռքի նախարարությունները կարող են ապահովել կրթության անվճար լինելը, իսկ հրատարակչությունները՝ անցկացնել փորձաշրջան:
- Քաղիր Հաս Համալսարանի դասախոսները կարող են լինել կապի մեջ և քննարկել Հնարավոր Համագործակցությունը: Դասընթացների քանակը կարելի է ավելացնել: Այս ուսանողները կարող են արևելահայերենի մասնագետ դառնալու աջակցություն ստանալ և դառնալ թարգմանիչ:
- «Հայ գրականության հիմնադրամը»-ը կարող է կազմակերպել թարգմանչական արհեստանոցներ և փոխհատուցել արևելահայերենից թուրքերեն թարգմանական ծախսերի մի մասը:
- Թուրքիայում հայկական հրատարակչությունները պետք է պաշտոնապես կառավարությունն ու Համալսարաններին տեղեկացնեն թարգմանություն



նոր ծրագրերի կամ դասընթացների անհրաժեշտութեան մասին:

- Թուրք գրականութեան թարգմանութեան հիմնադրամը՝ TEDA-ն, պետք է աջակցի և՛ դեպի արևելահայերեն, և՛ արևմտահայերեն թարգմանութեաններին:
- «Հրանտ Դինք» հիմնադրամը տարբեր եղանակներով կարող է աջակցել ծրագրի հետագա առաջընթացին ու կայունութեանը: Հիմնադրամն ինքնին իրականացնում է հրատարակչական գործունեություն: Մնացած հրատարակչություններն էլ կարող են աջակցել ու ներքին ինստիտուտ ստեղծել: «Հրանտ Դինք» հիմնադրամի արևմտահայերենի դասընթացները, որին մասնակցում են և՛ թուրքեր, և՛ հայեր, ամենատարբեր պրոֆիլներով ու ամենատարբեր պատճառներով կարող են օգտակար լինել՝ հայտնաբերելու և կրթելու հնարավոր թարգմանիչների: Եվ այս մասնակիցները կարող են ուղղորդվել ինստիտուտ:

ԲԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

- Հետագա միջոցառումները, որոնք կներառեն մշակութային տարրեր, պետք է անցկացվեն Թուրքիայում կամ Հայաստանում, հավաքեն երկու երկրների՝ համապատասխան փորձ ու հետաքրքրություններ ունեցող հրատարակիչներին: Պետք է կանոնավոր բնույթ կրեն (տարին կամ երկու տարին մեկ):
- Հայ և թուրք հրատարակիչների, թարգմանիչների ու ընթերցողների համար ստեղծել գործելու համար հարթակ կամ ցանց,
- Պետք է իրականացնել համատեղ հրատարակություններ, օրինակ՝ ԹՀԱ-ն կարող է նախաձեռնող հանդես գալ և հրատարակել թուրքերեն-հայերեն, հայերեն-թուրքերեն բառարան: Երկու երկրների հրատարակիչները կարող են հրատարակել հեքիաթներ, կարճ պատմվածքներ՝ միաժամանակ թուրքերեն-հայերեն: Մանկապատանեկան գրականությունը սկսելու համար պարարտ դաշտ է: Ակադեմիական գրականությունը, ինչպիսիք են Հայ հայտնի գիտնականների, ճարտարապետների կամ այլոց մասին պատմող գրքերը, Անիի խոհանոցը, ճանաչողական գրքեր, ինչպես նաև թուրք և Հայ ժամանակակից արձակը կարող են ուշադրություն գրավել: Ծրագիրը կարելի է խթանել բլլային հավելվածների միջոցով: Երկու կողմն էլ պետք իրականացի խթանող միջոցառումներ:



- Հայ հրատարակիչները կարող են դիմել՝ Ստամբուլի գրքի տոնավաճառին մասնակցելու:



**TÜRKİYE
YAYINCILAR
BİRLİĞİ**

TURKISH PUBLISHERS ASSOCIATION

SUPPORT TO THE
ARMENIA-TURKEY
NORMALISATION PROCESS
ԱՅՆԱՅԻՆՔԻ ՄԵԾԻՆԻ
ԿԱՐԳՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԵՆՆԵՐԻՆ
EREMENISTAN-TURKIYE
NORMALLESME SURECI
DESTEK PROGRAMI

**ՀԱՅ ՀՐԱՏԱՐԱԿԻԶՆԵՐԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՆ ԹՈՒՐԿ ՀՐԱՏԱՐԱԿԻԶՆԵՐԻՆ
ԾՐԱԳՐԻ
ԱՄՓՈՓԻՉ ԶԵԿՈՒՅՑ**

1 դեկտեմբեր - 31 մարտ, 2017



Bu faaliyet, Avrupa Birliği tarafından finanse edilen Ermenistan-Türkiye Normalleşme Süreci Destek Programı kapsamında gerçekleştirilmektedir.